

ԶԱՅԿԱԿԱՆ ԲՈՒՍԱՐԱՆ

« Հայկական Բուսարանութիւն »-ն յէն ետքը « Հայկական Բուսարան » մըն ալ պիտի ունենանք :

Աւելորդ է ըսել, թէ « Հայկական Բուսարան »-ի մը կազմութիւնը մեծապէս պիտի նպաստէ « չ միայն հայ բառամթերքի ճոխանալուն այլ եւ առաջնորդ պիտի ըլլայ մեր՝ այսպէս ըսենք՝ բժշկական գրականութեան մէկ ճիւղին ուսումնասիրութեան : Ես ինքս՝ իբրեւ Վարդապետ Ի Դեղագործութեան՝ տարիներէ ի վեր աշխատած եմ եւ կաշխատիմ շարունակ մեր նախնեաց գրականութենէ մեզ աւանդ մնացած բժշկարաններու մեկնութեան եւ բառերու ստուգութեան. գիտեմ թէ ի՛նչ բառական գանձեր կան այդ բժշկարաններու մէջ, բայց անոնց մեկնութիւնն ու համեմատութիւնը խիստ դժուար, հայ Բուսարանի մը գոյութիւն չունենալուն պատճառով : Տարիներ առաջ երբ սիրուած պաշտօնակից մը՝ հ. Սիմոն վ. Երեմեան, « Գործնական գիտութեանց բառգիրք »-ը կը պատրաստէր, 821 — 835 երեսներու փորձերն ինձ դրկած էր քննութեան եւ արագորութեան համար. բայց որովհետեւ ինձ առջարկուած էր միայն թուրք բառերը արագրել (1), նամակով մը յայտնեցի թէ հայ բառերու մէջ ալկան սխալներ եւ թէ ես անոնց պատասխանատուութիւնը վրաս չեմ առնելու Այսպէս ալ անցաւ Արդ ընական

(1) Իմ արագրութիւնն ծանուցուած է նոյն գրքի 82) երեսի ծանօթութեան մէջ, հետեւեալ բառերով. « Այս թուրք բառերն բառագրքին մէջ գտնուածներէն աւելի ստույգ են » — Պետք է յայտնեմ նաեւ, որ Տ Ղեւոնդ վ. Ալիշան իր « Հայբուսակ »-ը կազմելու ժամանակ 100-ի մը չափ բառերու մեկնութիւնը խնդրած էր ողբացեալ բժշկապետ Տիգրան փաշա փէշտիմալ ճեանէ, որ նոյնութեամբ ինձ յանձնեց անոնց քննութիւնը. եւ ես կրցածիս չափ կատարելով ինձ յանձնուած պաշտօնը, նոյն բժշկապետին վերագրու ձուցի բառերը :

է, որ եթէ հայ բժշկարաններու բառերը քննութեան առարկայ եղած եւ ճշտուած ըլլային՝ այլ եւս նեղութիւն չպիտի կրէինք ուրիշներու դիմելու:

Հայ բժշկարաններու քննութեամբ զբաղող միակ անձը որ ծանօթ է մեզ իր տոկուն աշխատութեամբ ու գիտական ուղղութեամբ՝ Նորայր Բիւզանդացին է: Այստեղ չեմ յիշատակեր ո՛չ հ. Արոնէն վ. Սուքրին եւ ոչ հ. Ղեւոնդ վ. Յովնանեանը, որոնք աւելի զրակաւն տեսակէտով յննած են մեր բժշկարանները: Այսպէս իմանալու է նաեւ հ. Սիմոն վ. Երեմեանի աշխատութիւնը Մանուկ Պոնտացիի բժշկարանի մասին, որուն պիտի վերագոռնամ ուրիշ առթիւ: Իսկ բոյսերու հաւաքման եւ անոնց անուաններու ճշտութեան աշխատած են՝ Գարեգին եպ. Սրուանձտեանց, Յ. Աթանասեան, բժ. Լեւոն Տիգրանեանց եւ վերջերս՝ բժ. Յ. Արթինեան: Ես ալ՝ կարծեմ 1898-ին՝ « Բիւրակն » յարաթերթի մէջ կոչ մը հրատարակելով խնդրեցի, որ ամէն կողմէ բոյսերու հաւաքման ձեռնարկին եւ անոնց գաւառական անուաններով զրկին ինձ, իմ ուսումնասիրութեան համար, ետքէն ալ « Մշակ »-ի մէջ « Գործ կայ գործող չկայ » վերնագիրը կրող երկտողով մը յանձնարարեցի Թիֆլիսարեակ ազգայիններու երթալ տեղւոյն « Բուսարանական այգի »-ն եւ նշանակել բոյսերու հայերէն անուանները: Հիմա հ. Ներսէս վ. Տիրացուեանն է սրարդի դիտութեան պահանջման համաձայն ձեռնարկած է « Հայկական Բուսարան »-ի մը կազմութեան, որուն համար հեռեւեալ բաց նամակը զրկած է խմբագրութեանս:

Վենետիկ 3/4 / 07

Ազնուամտօք Պարոն,

Սուրազրեայի Բնական Գիտութեանց համալսարանական ուսանող ըլլալով՝ յանձնեցին փնձ իբր Դափննպատկեան աւարտան (Thèse de lauréat) պատրաստել մեր « ԲԵՆԵՇԵՆԲ ՀԻ ԲՈՒՍԱԿԸՆՈՒ — La Flora Armena. —

Սոյն աշխատասիրութեանս մէջ լաւ յաջողելու համար, անհրաժեշտ է որ մեր Երկրի ԲՈՒՍԱՐԱՆ (herbier) մը աչքիս առջեւ ունենամ: Եւ որովհետեւ անհնարին է ինձ՝ զանազան գաւառներու բոյսերը անձամբ հասնել, մտածութիւնն ունեցայ մեր երկրի գիտաորջազաներու եւ գիւղերու ծանօթ ձեռնհաս անձերու դիմել:

Ձեզ եւս դիմուելու համարձակութեանս մասին ներողամտութիւնն իդ հայցելով՝ կը խնդրեմ ջերմագին որ՝ եթէ ո՛չ անձամբ՝ գոնէ ձեր ծանօթներու կամ նոյն իսկ զպրոցական ազոց միջնորդութեամբ՝ աշխատութիւն յանձն առնուիք նպաստելու ինձի, ժողովելով եւ ԲՈՒՍԱՐԱՆ ձեւացնելով այն ամէն ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿ բոյսերէն՝ որոնք Ձեր քաղաքի եւ գիւղերու շրջակայքը կը գտնուին:

Կը կանխեմ ըսելու թէ Գ' չ միայն պատրաստ եմ քեր ընելիք մանր ծախսերն ալ հատուցանել, այլ եւ Զեր անունը չի, եւ աշխատասիրութեանն մէջ, եւ երբ ազգութի օրինակ մը Զեզ նուիրելու փոյթն ունենալ, Դարձեալ՝ վարձի խոստանալ այն ամէն չաւ պատրաստուած բոյսերու համար՝ որ Բասուա քաղաքի Հախալարանին Տնկարանական պարտիզի քուսարանը ուզէ իրեն սեպհականել:

Ներուի ինձ համառօտիւ ծանուցանել թէ՛ Ի՞նչպէս պէտք է ԲՈՒՍՍՈՒՆ՝ (որ է՝ շորցուած եւ թղթի մէջ պահած բոյսերու հաւաքածոյ) կազմել:

Բոյսեր հաւաքելու համար շրջագայութիւն ընողը՝ պէտք է միասին ունենայ՝ զմեղին, մկրատ եւ բոյսը արմատով հանելու քործիք, նաեւ աման մը՝ որ յարմար ըլլայ բոյսերը մէջ լեցընելու: Ամէն մէկ տեսակ բոյսէ երկերկու կամ երեք երեք օրինակներ ժողովելինից փաստիւսի է:

Շրջագայութեան դառնալով՝ պէտք է իւրաքանչիւր տեսակ բոյս առանձին լրագրի կտորի մը (կամ լաւ եւս ծծուն թղթի) վրայ տարածելով վրանին ծածկել 6էն 10 անգամ ծալուած օւրիշ լրագրիներ (կամ ծծուն թղթեր) Յետ բոյսերու եւ թղթերու ամբողջութիւնը վըրայէ վրայ դիզելու՝ պէտք է տախտակով (կամ ստուարաթղթով) մը ծածկել եւ ասոր վրան թի խոշոր քար մը կամ ծանրոցներ զետեղել: որով բոյսերը լաւ մը կը ճնշուին եւ իրենց խոնաւութիւնը թղթերու կ'անցնին: Երկրորդ օրը խոնաւցած թղթերը պէտք է փոխել եւ բոյսերը ուրիշ արեւու մէջ շորցուցած թղթերու վրայ փոխադրել, եւ դրնել նորէն ծանրոցներու ճնշման տակ: Երրորդ օրը վերստին փոփոխել թղթերը, եւ այսպէս շարունակել 5էն մինչեւ 10 օր: Սոյն սճով բոյսերը լաւ մը կը չորնան եւ չեն մկրտի: Եթէ աշխատութիւննից լաւ չյաջողի պէտք չէ հոգ ընել, ես սիրով կ'ընդօժանիմ անկասար պատրաստուած բոյսերն ալ:

Փափաքելի է որ խոտեղէն ծաղիկ սօսող ՅԱՏԱՍԵՐ (phanérogame) բոյսերը կատարեալ օրինակներ ըլլան: այսինքն թէ՛ ունենան արմատ, ցողուն, ծաղիկներ, եւ եթէ հնար է՝ պտուղներ կամ սերմեր ուրիշ թղթէ քակներու մէջ լեցընելով՝ բոյսը կրող թղթին կը կցեն: Փայտեղէն տուկերու, երկայն ցողունով բոյսերու, եւ ծառերու գալով՝ բաւ է հաւաքել անոնցմէ շիճիկներ՝ որոնք ունենան տերեւներ եւ ծաղիկներ: Պարտէզներու մէջ ձաղկող թէ՛ ընդեղէն եւ թէ՛ քարդի ծառայող բոյսերու ամէն տեսակներէն (զոր գրինակ, վարդերու, կակաչներու, լուբիաներու, ցորեկներու, եւ այլն) պէտք է նմայներ հաւաքել:

Բուսարանի համար պատրաստուած բոյսը լաւ կ'ըլլայ՝ էջ մը մաքուր թղթի վրայ (որոյ մեծութիւնն պէտք չէ տնօրէնի 0,35X0,50

հարիւրամետրը) դերձանով կամ կպչուն թղթի շերտերով, կամ գնդա-
սեղներով հաստատել: Եթէ ազատ աչ ձգուի վնաս չի քերել:

Փափաքելի է նաեւ որ ամէն բոյս կրող թղթին վրայ նշանակէք
անոր ԱնՈՒՆԸ՛ ո՛ր եւ է լեզուով որ գիտէք, անոր Ի՞նչՁՊԻՍԻ՛ ԳեՆՆԻ
ԱՐԴԻԻՆՔ՛ ԸԼԼալը, լեռնայի՞ն թէ դաշտայի՞ն, անտառայի՞ն թէ բլու-
րայի՞ն, եւ այլն, եւ գրէք նաեւ թէ ո՛ր ԱՄՍՈՒԱՆ եւ ՕՐՈՒԱՆ մէջ
տողված էք:

Առանց պահանջելու Ձեզմէ, աւելորդ չեմ համարիր պարզելու
թէ, հոս Եւրոպայի մէջ, իւրաքանչիւր բոյս կրող թղթին կը միացը-
նեն պիտակ մը (թղթիկ՛) որու վրայ հետեւեալ շարք մը տեղեկու-
թիւններէն գէթ գլխաւորները գրուած կ'ըլլան:

Ա. — Բոյսի անունը, ո՛ր եւ ո՛րքան լեզուով եւ դաւառարար-
քառով որ հաւաքողը գիտէ:

Բ. — Բոյսի գտնուած տեղւոյ յատուկ անունը, կամ յիշել, թէ
այն բոյսը, ո՛ր քաղաքի, կամ գեղի ո՛ր գետի կամ լեռան մերձակայ-
քը կը գտնուի:

Գ. — Ընդհանրապէս այդ բոյսը ինչպիսի՞ տեղեր կը բուսնի:
(Ձոր օրինակ, դաշտայի՞ն է թէ անտառային, ճախնայի՞ն է թէ ջրա-
յին, աւերակներո՞ւ մէջ թէ քարաժայռերու կամ պատերու վրայ կը
բուսնի, Եթէ բլրային է կամ լեռնային, այն ատեն կը նշանակեն
նաեւ թէ մերձաւորապէս ո՛րքան բարձրութեան վրայ կը բուսնի եւ
ո՞ր դիրքի վրայ, այսինքն Հիւսի՞ս թէ Հարաւ, Արեւե՞լք թէ Ա-
րեւմուտք):

Դ. — Ի՞նչպիսի հող կը սիրէ՝ կրայի՞ն թէ գաւարային, աւա-
ղո՞ւտ թէ կաւային՝ Հազուադի՞ւտ է թէ սովորական:

Ե. — Ի՞նչ բանի կը գործածուի. (Դեղ կ'ըլլա՞յ, մարդիկ կամ
կենդանիք կ'ուտե՞ն, արհեստից մէջ կը գործածուի՞):

Զ. — Մաղկումը ո՛րքան ժամանակ կը տեւէ: (Ձոր օրինակ,
Մարտի սկիզբէն՝ Ապրիլի կէսը, կամ Մայիսէն՝ Սեպտեմբեր):

Է. — Բոյսը գտած օրերնուդ թուականը, եւ գտնողին անունը
եւ մականունը:

Գարնան սկիզբը անտառներու եւ ամառն ու աշնան դաշտերու եւ
հովիտներու մէջ միասին կը ծլին, կը ծաղկին եւ կ'ապրին՝ ծաղիկ
տուող եւ կամ բնաւ ծաղիկ չտուող բազմաթիւ բոյսեր մեծ ու պզտիկ
առաւել կամ նուազ գեղեցիկ տերեւներով կամ ծաղիկներով: Թերեւս
ամենաազդեցիկը եւ փոքրիկները իմ ուսումնասիրութեան համար օգ-
տակարագոյն լինին: Ուստի կը խնդրեմ՝ ո՛ր եւ է տեսակ (espèce) եւ
զանազանակ (variété) բոյսեր գտնէք՝ անխտիր բուսաքաղէք եւ շրկէք

իմ հասցէիս յանձնարարեալ (recommandé, թալուալու, սիւֆարը) ծրարով մը:

Մեծայոյս եմ որ առաջին ծրար մը այս 1907ի գարնան յղելով, ամառը եւ աշնան ալ կը զրկէք ուրիշներ ի վերջ գրութեանս կը խնդրեմ ի սրտէ՝ որ բարեհաճիք երկտողիւ մը, ներկայ թուղթս ընդունելիք եւ ձեր տրամադրութիւնը ինձ ծանուցանել՝ որուն համար կանխելով իմ ջերմաջերմ շնորհակալիքս, մնամ

ԱճձՆՈՒԵՐ

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԻՐԱՏՈՒԵՍԷ

Կ. Մխիթարեան

Հասցէս է՝

R. P. Nersès Dirazouyan

Studente in Scienze Naturali. Nell'Orto Botanico

Della R. Università di

(Italia)

PADOVA

Իբրեւ բացատրութիւն՝ այստեղ կը հրատարակեմ նաեւ Կ. Տիրացու-եանի ծրագիրը, զոր հաճած է մասնաւոր նամակով ինձ զրկել եւ կարծիքս ուղել:

1. Պատմական եւ գրախօսական տեղեկութիւնք Հայաստանի բուսա-կանութեան վրայ:

2. Թուարկութիւն եւ ծանօթութիւններ այն աղբիւրներու որոնցս մէջ պիտի օգտուիմ. (40է աւելի):

3. Աշխարհագրական ցուցակ կամ տեղագրութիւն Հայաստանի եւ շրջակայ այն ամէն տեղերուն՝ ուր օտար կամ հայ գիտնականք ճանապարհորդած եւ սոյն տեղերու վերաբերեալ բոյսերը հաւաքած եւ նկարագրած են:

4. Հայաստանի հարուստ բուսաբանական վայրերու՝ տեղագրական պայմանները. (աշխարհագրութիւն, երկրաբանութիւն, կլիմայախօսութիւն եւ ecologia botanica):

5. Կազմութիւն հայ բուսականութեան եւ անոր ընդհանուր բնոյթը՝ բաղդատմամբ շրջակայ երկիրներու բուսականութեան:

6. Բուսաբանական քարտէշներ մեր երկրի՝ նշանակելով հազուա-գիւտ եւ առ հասարակ ամէն կողմ գտնուող բոյսերու կայանները եւ անունները, եւլն:

7. Դասաւորական ցուցակ իմ անձամբ ուսումնասիրած բոյսերուն, անոնց կոմանիշ անունները՝ տրուած զանազան բուսաբաններէ: Լատի-

ներէն անուըր որ վերջնականապէս պէտք է տալ՝ ըստ 1905ի Վիեննա գումարուած համազգային բուսաբանական ժողովոյ կանոններուն:

8. Խօսք իմ դասաւորած բոյսերու՝ աշխարհագրական բնակավայրերուն Հայաստանի մէջ, զուրս ցատկեցընելով անոնց կարիւրութիւնը եւ ունեցած յատկութիւնները՝ բաղդատմամբ ընդհանուր բուսականութեան հետ:

9. Յիշումն հայ բոյսերու գլխաւոր exsiccata-ներու՝ որ կը պանուին Եւրոպիոյ զանազան բուսաբաններուն մէջ:

10. Յանկ հայ բոյսերու պատկերներուն՝ որ օտար եւ ազգային հեղինակներու հրատարակութեանց մէջ կը գտնուին: Եւ գունատիպ նըկարներ իմ ձեռքս գտնուած Հայկական բոյսերու, եւլն:

Ես կատարելապէս համաձայն եմ այս ծրագրին, եւ ո՛րեւէ դիտողութիւն չունիմ: Կարծեմ ընթերցողներս ալ համաձայն են. իսկ եթէ դիտողութիւն մը ունին, կրնան գրել ուղղակի է. Տիրացուեանին:

Խնդիր մը կը մնայ միայն, — թէ արդեօք է. Տիրացուեան պիտի կրնա՞յ հարկ եղած աջակցութիւնը գտնել մեր բանասէրներէն, որպէս զի կարենայ իր աւարտածառը պատրուակել: Կերեւի թէ ինչն ալ թեւրահաւատ է այդ մասին, ինչպէ՞ս կերեւի իր նամակին հետեւեալ տուեալներէն. « Բայց որովհետեւ սոյնպիսի ձեռնարկ մը անկարելի է տարեկան ընթացքի մը մէջ լմընցնել, ես պիտի ջանամ մինչեւ 1908ի յուլիսը հասցընել Հայկական Ֆլորայի նմուշ մը 200 էջի չափ: Ապա անկէ վերջը բուն մտադիր եմ ինամբով աշխատիլ եւ պատրաստիլ ըստ կարելւոյ կատարեալ Flora Armena մը »:

Յաջողութիւն կը մաղթեմ:

Անոնք որոնք երկրին մէջ չեն եւ հետեւաբար չեն կրնար ուղղակի նպաստել այս տեսակ աշխատութեան մը, կրնան դարձեալ օգտակար ըլլալ՝ գրելով իրենց ծննդավայրի ազգականներուն ու բարեկամներուն, որպէս զի բուսաքաղին իրենց գիւղերու զանազան տեսակ բոյսերէն եւ զրկեն վերոյիշեալ հասցէին:

Ասիկա բարոյական պարտականութիւն մըն է, որ կը ծանրանայ գաւառացի ազգայիններու վրայ:

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ